Ա. ՏԱՐԻ — ՁՈՐԵՔՇԱԲԹԻ 2 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1898 — ԹԻՒ 59

# ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: А. Сукясовъ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան 10 ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար
տարեկան »
Վեցամսեայ 6 »

ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Գրութիւնք չեն տրուիր

Ծանուցման տոյր 20 սանթիմ ի. տեղիին առի թ ամսամամանեակներու համար 20 0/0 զեղչ կը լլայ։

)( ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ )(

Նամակ եւ դրամ դրկել
Խմբագրութիւնս հասցի

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

)( ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ )(

R. P. Kalémkarian
(Autriche) Mechitharis tangasse W. 4 Vienne

## ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

—).(—

Օրուան հրատապ խնդիրները, Քարթումի գրաւումը, Կրէտէի նոր արիւնչեղութիւնները, Տրէյֆիւսին գործը, Զարին առաջարկը, Աւստրիոյ կայսրուհիին եղերական մահը, և այնքան ուրիշ մեծ խնդիրներ պատճառ մը չեն որ դպրոցներու վերաբացման այս օրերուն մէջ, մոռնանք մեր կրթական յաւիտենական հարցը, որ միշտ կանգուն կեցած է մեր դէմ եգիպտական փինքսին պէս, և եթէ կարելի է այսպէս ըսել, ինք ալ կը զարմանայ թէ ինչո՞ւ չլուծուիր, երբ այնքան դիւրին է մեր այս միջավայրին մէջ, մեզ ընծայուած պէս պէս դիւրութիւններուն շնորհիւ։

Բայց կրթական խնդրին հիմնական բարենորոգումը, որուն անհրաժեշտ պէտք ունինք, և որ կրնայ իրականանալ Պուլկարիոյ բոլոր հայ դպրոցներուն նոյն խուրձի մէջ ամփոփուելովը, մտածուած, կշռուած և միջավայրին համապատասխանող լաւագոյն և միօրինակ յայտագրի մը հիմանվրայ, պէտք է յիշեցնէ մեզ թէ ո՛րքան մասնական ջանքերու կը կարօտինք իւրաքանչիւրս մեր շրջանակին մէջ, որպէս զի օրը հասած ատեն, անպատրաստ չը գտնուինք և փոխանցումը որքան հնար է հեշտ ըլլայ։

Անցեալ շրջանին վերջերը կատարեալ քաոս մըն էր որ կը տիրէր ամէն տեղ. բոլոր ուսուցիչները ճամբուած, անստոյգ ապագայ և ընդհանուր շուարում։ Ուրախութիւն է սակայն որ կրթական գործին վրայ իջած մարտխուղը վերջերս քիչ շատ անօրացաւ և կացութիւնը աւելի ուրոշ ցուցուց։ Վառնան իր ուսուցիչները ունեցաւ, Շումլան լաւ ուսուցիչ մը կոչեց պաշտօնի, Սիլիստրէն և Փիլիպէն ջանքեր կընեն ուսուցչական յարմարագոյն խմբով մը օժտուելու, Ռուսչուք փոփոխութիւններ մտցուց. վերջապէս, ուսուցիչ և ուսուցչուհիներու երթ և եկ մը տեղի ունեցաւ, և այս պահուս գրէթէ ամէնքը իրենց տեղերը բռնած են պատնէշին վրայ, ինչպէս կըսեն... լուսոյ կռիւը մղելու խաւարին դէմ։

Հիմա, կը ներէ՞ք աչքի առջև բերելու հայ հասարակութեան բռնած դիրքը այս դերագոյն կռուի պահուն. նոյն դիրքն է զոր բռնեց յեղափոխութեան վերաբերմամբ. մեծավայելո՞ւչ անտարբերութիւն. կամ շատ շատ շահագրգռում մը որ քիչ անգամ պղատոնական սահմանէն անդին կանցնի։

Ուսուցիչները անդուլ աշխատութեան տարի մը ունին իրենց առջև. որմէ սակայն չեն խրտչիր երբ յարատեւ կամքը, և արուեստին սէրը զօրավիգ ունին իրենց։ Բայց այդտեղ չվերջանար իրենց գործը. ամէն դասատու իր բնական թշնամիներէն զատ զորս կունենայ յանձին իր նախորդին պաշտպաններուն, ենթակայ է նաեւ դրամական զբաղանքներու ինչ որ հայ ուսուցչին ճակատագրային դարաւոր աղետն է։ Հոգաբարձութիւնները շատոնց իրենց վարկը կորսնցուցած են, և անոնց փայլուն խոստումները շատ միջակ վստահութիւն մը կը ներշնչեն։

Հոգաբարձութիւնները պախարակել չէ միտքերնիս։ Անոնք ալ նոյնքան կը տառապին որքան իրենց ուսուցիչները և նոյն իսկ «խոստմնազանց» յորջորջուելու նախատինքին ալ յանձնառու կըլլան, ինչ որ պզտիկ գործ չէ. և քիչ մը կը նմանին անոնց՝ որ լաւ դաս մը պաշտպանելու համար, ամէն ծաղր և արհամարանք յանձն կառնեն՝ վստահելով ապագային։ Հոգաբարձութիւնները շատ անգամ կրթութեան սիրոյն՝ և պզտիկ չմնալու համար, կերմարդկային ճիգեր կը թափեն և ճշմարիտ հնարքներու կը դիմեն կորզելու համար ժողովրդէն այն դրամը զոր յօժար կամքով տալու աղնութիւնը չունի։

Ասոր համար չէ՞ որ, օրինակի համար Վառնայի Թաղ. Խորհուրդը խաչալեմին տուրքը հնարեց և «թարիֆայի մը պայմաններուն ենթարկեց յուղարկաւորութիւնները։ Եթէ ողջերը չէին տար, պէտք էր մեռելներէն գանձել։

Այսպէս, Վառնայի դպրոցներուն բարեկարգութիւնը ննջեցեալներու թիւին հետ ուղիղ կերպով կը համեմատի։ Ով որ իր դպրոցը կը սիրէ, իր զաւակներուն աղեկութիւնը կուզէ... թո՛ղ մեռնի։ Ուրիշ ճար չկայ։ Թող մեռնի որպէս զի օրական անհրաժեշտ հասոյթ մը թողու դպրոցին. որովհետեւ մեր մէջ, դպրոցը ապրեցնողը՝ որդեսիրութեան և ազգային զարգացման ղգացումը չէ, այլ սեւ թաւիշը, խաչալեմը և ղոյդ մը մոմեր։ Եւ մինչեւ որ մեռելթաղին բրիչը հողի կոյտեր չնետէ դստգաղի մը վրայ, դժուար պիտի ըլլայ մեր ուսուցիչներուն վախ վարձ մը տալ իրենց այնքան տգնութեանց փոխարէն։ Տխո՞ւր բան։

Թո՛ղ տեսնայ հասարակութիւնը թէ իր պարտաղանցութիւնը, իր անսրակելի անտարբերութիւնը ո՛ր տեղուանք կիջեցնէ զինքը, և ի՞նչ տխուր հիմերու վրայ կը դնէ իր զաւակներուն ապագային գործը....

ԴԱՄԵՐ-ԱՐՇԱՒԻՐ

## ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

—).(—

Բ.

Այնուհետեւ աւելի անհրաժեշտ եւ կենսական կը ներկայանար մեր ինքնապաշտպանութեան խնդիրը, բայց միանգամայն աւելի դժուարին, որովհետեւ նոր շրջան մը թեւակոխած էր։

Ա՛լ մեզ հարստահարող քիւրաը լոկ ապրուստի պէտքէն չէր մղուէր, ա՛լ Թուրք ամբոխը լոկ կրօնի մոլեգնութենէն չէր բորբոքէր, եւ մեզ կեղեքող պաշտօնեան ա՛լ միմիայն իր քսակը պարարտացնելու տենչէն չէր դրդուէր։ Այլ ասոնք բոլորը սաարները կը հանդիսանային թաքուն ծրագրի մը, որու գործադրութեան հրահանգները կը տրուէին ուղղակի պետութեան կեդրոնէն։ Ուստի եւ մեր ինքնապաշտպանութեան ճիգերը պիտի բախէին այդ ճիւաղային ծրագրի տրամադրութիւններուն ու հետեւաբար ընդդիմութիւն մը պիտի ըլլային անոր ոճրագործ հեղինակին դէմ։ Սակայն այս փոխադարձ խուլ պայքարը չէր կրնար երկար շարունակուիլ եւ իրերու անխուսափելի հետեւանքով շատ չանցած պիտի կերպարանափոխուէր բացայայտ կռուի՝ յեղափոխութեան։

Այս ակներեւ իրողութիւնը անտարակուսելի կերպով հաստատող բազմաթիւ դէպքերէ յետոյ, այսօր մեր խոհեմ—ազգասէրները կը բարեհաճին խոստովանիլ ինքնապաշտպանութեան անհրաժեշտութիւնը՝ բայց միանգամայն կը պահանջեն որ այդ կատարուի, առանց աղմուկի, առանց ներքին շարժումներու։ Այլանդա՛կ հակասութիւն, որ կը ցուցնէ դժբախտաբար թէ այսքան աչխարհաղղորդ դէպքերէ յետոյ, երբ ամենահեռաւոր վայրեր, հայ անունը չգիտցողներն իսկ ծանօթացան մեր կացութեան, մեր մէջ դեռ կը գտնուին այնպիսի արարածներ, որոնց աչքերն ու ականջները կարծես երբեք հաղորդակցութիւն չունին իրենց ուղեղներուն հետ եւ կը խօսին, կը գրեն, կը քննադատեն լոկ քմածին երեւակայութեամբ։

Մեր ստորասութիւնը ապացուցանելու համար համառօտ տեսութեամբ մը բացատրենք թէ որչափ կը տարբերին Թուրքիոյ մէջ յեղափոխութիւնը կամ ինքնապաշտպանութիւնը հայերու կողմէ եւ թէ մինչեւ ո՛ր աստիճան կրնայ հաշտուիլ իրականութեան հետ, հանդարտիկ ինքնապաշտպանութեան արտաքոյ գաղաղարը։

Գ.

Ընդունինք մեր այսօրուան ածան պատգամախօսներուն հետ թէ՝ «սպասելով լաւագոյն օրերու՝ ինքնապաշտպանութիւնը պէտք է ըլլայ հայութեան ծրագիրը»։ Սակայն իրենք ալ պիտի ընդունին կարծեմ՝ թէ խօսքով եւ պղատոնական ցանկութեամբ չէ որ կիրականանան ծրագիրները։ Նախ պէտք է իմանալ թէ մեր ժողովուրդը որքան տրամադիր է եղած ինքնապաշտպանութեան, եւ ի՞նչ կերպով յառաջ տարուած է ցարդ այդ գործը։

Դարաւոր զինուած ինքնապաշտպանութեան կոիւէն ընկճուած՝ թշնամիի բռնաբարումներուն երկարատեւ համակերպութիւնը ջլատած էր հայ ժողովուրդի մէջ ինքզինքը բացարձակապէս պաշտպանելու զգացումը։ Քաղաքական ու զինուորական ասպարէզներէ զրկուելով ինքզինքը տուած էր արդիւնագործութեան, միայն այս խաղաղ ընթացքով կրցած էր անգիտակցաբար ձեռք բերել հակառակորդին դէմ մաքառե-

լու անուղղակի միջոց մը, տնտեսական մրցումը, որ սակայն անզօր էր առանձինն սուրի հարուածին դէմ։ Վերջին դէպքերու ատեն տեսանք որ հայ աշխատաւորի ժառանգական աշխատութեան արդիւնքը քանի մը ժամուան մէջ ոչնչացաւ զինուած խուժանի յարձակումէն։ Ու բեմն հարկ էր տարբեր միջոցի դիմել, ուղղակի այն միջոցին, զոր թշնամին կը գործածէր մեզի դէմ։ Բայց դարուց ի վեր սուր, զէնք ձեռք չառած՝ մերկ սուսերին առջեւ զոդալու սովոր ժողովուրդէ մը ինչպէ՞ս կարելի էր յուսալ որ ինքնաբերաբար իր կանգուներն կամ արօրին քով զէնք մըն ալ դնէ եւ ի հարկին զայն ալ գործածէ։ Անշուշտ՝ կարելի չէր իբր մոգական գաւազանով մը յանկարծակի հրահրել բազմադարեան սարկութեամբ թմրած ցեղի մը նկարագիրը։

Դեռ յեղափոխական դէպքերէ առաջ՝ երբ զորօրինակ՝ քրդերու հարստահարութիւններէն թշուառացած՝ պանդխտութեան դիմող Մշեցի մշակները կը յանդիմանէինք իրենց զզուելի երկչոտութեան համար եւ զիրենք տանջող քրդերուն ալ իրենց նման մահկանացուներ ըլլալը առարկելով, ինքնապաշտպանութեան կը յորդորէինք, կը պատասխանէին.

—Մենք գիտենք որ քրդերն ալ մեզի պէս մահկանացուներ են, բայց անոնք մանկութենէ կը վարժուին զէնքի ու կռուի, մինչդեռ մենք, հայերս, դարերէ ի վեր սովրած ենք գլուխնիս ծռած հպատակիլ անոնց։ «Մեզի առաջնորդներ պէտք են, որ քաջալերեն, խելք սովրեցնեն»։

Առաջնորդները չուշացան. եռանդուն գործիչներ ցրուեցան գաւառները. քարոզեցին, յորդորեցին, բայց փորձը ցուցուց որ լոկ խօսքն ալ ազգու խթան մը չէր քնած ժողովուրդը արթնցնելու։ Հասարակութեան հին առաջնորդները, կղերականներ, աղաներ, անոնք որ «ի զէ՛ն, ի վրէ՛ժ, մի՛ ձախ, մի յաջ, յառա՛ջ, յառա՛ջ, հապօ՛ն յառաջ...» կերգէին բաժակին տպաւորութեան տակ, մեծ մասամբ ահաբեկ կը հեռանային այդ նոր «խելք սովրեցնող»ներէն եւ անոնց պրօպականային տակաւ ազդեցութիւնն ալ կը հակակշռէին իրենց «խոհեմութեան» յորդորներով։ Ուրեմն գործ պէտք էր, կենդանի օրինակ։ Հարկ էր զէնք ճարել, սակաւաթիւ արամագիրները գինել եւ գործնականապէս ցուցնել թերահաւատ մեծամասնութեան թէ՝ հայը եթէ կամք ու սիրտ ունենայ կրնայ ինքզինքը պաշտպանել։ Հազար ու մէկ նեղութիւններով զէնքեր բերուեցան եւ ուզողներու ցրուեցան։ Քանի մը տեղեր չուտով տեսնուեցաւ այդ զէնքերու բաբերաբար արդիւնքը, քրդերու հրոսակային ջոկատները ընկրկեցան նորազէն հայ գիւղերէն։ Բայց ահա Թուրք կառավարութիւնը եղելութիւնը իմացաւ, զապթիէներու խմբեր փութացուց եւ իրենք զիրենք պաշտպանելու համարձակող կեավուրները իբրեւ ապստամբ ձերբակալելով զնդանները նետեց, արհամարհելով ամէն արդարացի բողոք։ Այս անակնկալ հրէշային միջամտութիւնը՝ վարանողներու երկչոտութիւնը արմատացուց եւ ինքնապաշտպանութեան գաղափարին ծաւալումը աւելի դժուարացաւ։

ԿԱՐԻՃ

(Շարունակելի)

# ՀԵՐՈՍԻ ՍԱՀԸ

(Ազատ փոխադրութիւն Խրիսօ Բօսքէի)

Լեռան կրծքին ընկած է ծաղկափթիթ հերոսը խոր վէրքը կրծքում եւ արիւնչաղախ։

Նրա մի կողքում ընկած է իր սիրելի եւ թշնամուն մահ սփռող հրացանը, իսկ միւս կողքում երկուսի փշրված թշնամիների գլուխներ հնձող սուրը։

Հերոսի աչքերը մթնում են, գլուխը պտտվում, իսկ դժգոյն շրթունքները բոլոր բոնակալներին անէծք մրմնջում...

Ամրան արեւը այրում է. հերոսի մահացու վէրքից վարդագոյն արիւնը հոսում է կաթիլ կաթիլ, իսկ հեռուից լսվում է հնձւոր սարուկ գեղջկուհու մելամախծոտ երգի սիրտ ծակող ձայնը։

Հնձի ժամանակ է...

Երգեցէք հնձւորներ ձեր սարկական տխուր երգերը... ահա կորչում է եւ այս քաջը...

Բայց չէ, լռիր իմ սիրտ. ի՞նչ եմ ասում, չէ, ազատութեան համար մղած կռիւի մէջ ընկնողը չէ մեռնում... նրան ափսոսում են երկինք ու երկիրը, ամբողջ բնութիւնը եւ ամէն արարած, իսկ երգիչները նրա վրա տաղեր են հիւսում եւ դարերի համար հերոսին անմահացնում...

Ցորեկը արծիւը մահամերձ հերոսին առնում է իր զօրաւոր թեւերի սուերի տակ, գայլը նրա արիւնոտ վէրքն է լիզում, իսկ քաջ բազէն հսկում է իր մահամերձ ընկերոջ գլխի վերեւում...

Երեկոյ է. լուսինը փայլում է դժգոյն լոյսով, տխրադէմ. աստղերը զարդարում են երկնակամարը. փչում է մեղմ ու զով զեփիւռը. անտառը խշշում, մրմնջում է, իսկ լեռը հնչում հայդուկի երգը։

Երգը հրապուրում է յաւերժահարսերին. նրանք գալիս են հերարձակ, տխուր եւ հրաշալի. թաւշանման խոտերին հպիւ իրանց ոտիկները հպելով՝ մօտենում են հերոսին եւ նստոտում նրա կողքին...

Ահա նրանցից մէկը տառը ջրով սրսկում է հերոսի մահացու վէրքը. միւսը բուժիչ ծաղիկներ դնում, իսկ երրորդը եւ ամենից հրաշալին՝ ջերմ համբոյր դրոշմում հերոսի գեղնած ու արիւնից զուրկ շրթունքներին...

Հերոսը մի վայրկեան աչքերը բաց անում, ժպտում է սիրուն ժպիտով եւ մրմնջում...

Ասա՛ ինձ, քոյրիկ, ո՞ւր է ընկերս, ո՞ւր է եւ իմ հաւատարիմ խումբը, ասա, քոյրիկ, ապա հոգիս առ, ես ուզում եմ այստեղ մեռնել... յաւերժահարսերը թեւերը թափահարելով ու երգելով երկինք են թռչում հերոսի ընկերոջ հոգին փնտռելու եւ, փնտռում են...

Լուսացաւ, դեռ հերոսը ընկած է լեռան կրծքին. դեռ վարդագոյն արիւնը հոսում է մահացու վէրքից, դեռ գայլը լիզում է վէրքը... հեռուից լսվում է սարուկ հնձւորի տխուր երգը...

ՎԱՐՈՅ

## ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Տ. Լ. Սիդիստրէ. — Ձեր յիշած գրութիւնը չենք ստացած։

Տ. Ս. Գուրկազ. — Ստացանք, Տ. Կինէֆի միջոցով։

——).(——

# ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս, 27 Օգոստոս

Պոլսեցին չհանդիպիր որեւէ նորութեան, որ սրտապնդիչ եւ ուրախաւէտ ըլլայ։

Բաղեշի շրջականները նոր սպանութիւններ ու կողոպուտներ տեղի ունեցած են քիւրտերու կողմէ, եւ ասոնց տեղեկագիրը պատրիարքարան ղրկուած է Բաղեշի հայոց առաջնորդարանէն։ Ահռելի նկարագրութիւններ. իբրեւ թէ սպանութեան սովորական միջոցներ չէին բաւեր, հիմակ ալ ամորձիկներ հանելու միջոց մը գտնուած է։ Քրիստոնէութեան առաջին դարերը կը վերանորոգուին կարծես։ Բաղեշի մօտ գիւղի մը մէջ 9 հոգիէ բաղկացած ընտանիք մը ամբողջովին սրէ անցուեր է. այս դէպքը Բաղեշի առաջնորդին կողմէ տեղեկագրուեր է կուսակալին, որ պատասխաներէ թէ հայերը կատարած են այդ սպանութիւնները. բայց մէկ քանի օր յետոյ քննիչ մարմին մը ղրկուելով դէպքին վայրը, գիւղացիք ցոյց տուեր են ոճրագործները, հինգ քիւրդեր, որոնցմէ չորսը ձերբակալուեր ու դատարանի յանձնուեր են։ Պատրիարքարանը տեղեկագրեր է կառավարութեան և կը լսուի թէ Բ. Դռնէն պատճառը հարցուեր է այս դէպքերուն, որոնք զոհերու մեծ թիւ մը կը կաղմեն հիմա։

—Կառավարութիւնը փոխանակ այս կարգի ոճրագործները գտնելու ու պատժելու, և խեղճ գաւառացւոց անդորրութիւնն ապահովելու, Պատրիարքարանի խնդրանքին վրայ հիւանդանոցի հացին ու մսին յաւելում մը ըրաւ, որ ի ձայն ցնծութեան կողջունուի այս կողմերը և կիրակի օրը Օրմանեան Պատրիարք բարեբաղդութիւնս գտայ եւ շարունակեցի պատասխանել նրանց սւած հարցերին. մանաւանդ որ Մուրատն ու Վռամեանը արդէն ինձնից առաջ փախել էին եւ նրանց տուները խուզարկուել. յետոյ Կարապետ Քիւրքճեանն էլ ժամանած էր ձերբակալված տէրօրիստների կողմից եւ վաղուց փախել էր Տաճատի տէրօրիստի հետ. այնպէս որ իմ յուշատետրիս մէջ կառավարութեան նախօրօք ոչ յայտնի, մի մարդ կար. միայն Աստուածատուր, որը նոյնպէս մի քանի շաբաթ առաջ հեռացել էր Պոլսից։

Նորից ասում եմ որ իմ պատճառով ոչ մի մարդ չէր կարող ձերբակալվել, որովհետեւ բոլորն էլ կառավարութեան արդէն ծանօթ էին, ինձնից առաջ մատնված եւ միեւնոյն ժամանակ արդէն Պոլսից հեռացած. ես ուզեցի օգտվել այդ հանգամանքից եւ կառավարութեան արդէն յայտնի, խուզարկութիւններով ու իրանց փախուստով յանցաւոր լինելը հաստատված մարդկանցը կոմիտէի ընկերներ յայտարարեցի, միւսներին բոլորովին կասկածից ազատելու դիտումով։ Ուրիշ կերպ էլ անկարելի էր. դրանով ես փրկում էի Պոլսում մնացած բոլոր կարեւոր գործիչներին, եւ ինձ միացնում էի արդէն կառավարութիւնից հալածված եւ յայտնի մարդկանց, որոնք իրանք փախել եւ ազատ էին։ Այդ միացումով ես աւելի դժուարացնում էի իմ գործը եւ վիճակս. բայց ո՛չ կառավարութեան ձեռքից արդէն խուսափածների։

Հարցաքննիչը շատ հեռաքրքրվեց «Արեւելքով», նա կարծեց որ Արեւելքի խմբագրութիւնն էի նշանակել. սուրին նրա խմբագիրների անունները, աւելին եւ Արփիարի անունը։ Ես պատասխանեցի որ «Արեւելք» պայմանական անուն է. կեղծ՝ ոչ թէ Արեւելք լրագիրը եւ այդ լրագրի խմբագիրներին չեմ ճանաչում։ Արփիարին ճանաչում եմ իբր հրապարակախօսի եւ շատ վատ կարծիք ունեմ նրա մասին. նա երբեք չէ կարող յեղափոխական լինել, եւ չէ։ Ես նրա ընկերը չեմ եւ երբեք չեմ կարող լինել։ Նա երբեք յեղափոխական գործով ինձ հետ տեսակցութիւն չունեցել. եւ ոչ ես եմ այդ մասին նրա հետ խօսել։

(Շարունակելի)

## ՎԱՐԴ-ՊԱՏՐԻԿՈՎԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ (33)

Հետեւեալ օրը սկսեցի պատասխանել քննիչի այն հարցերին թէ ինչու մենք յեղափոխական մարմին ենք ստեղծել եւ ի՞նչ հիմքեր ունենք գժգոհ լինելու Թուրքաց կառավարութիւնից։

Այդ տեղ արդէն խօսում էի շատ խիստ եւ կարողացածիս չափ վառ գոյներով նկարագրում Թուրք բռնակալ ըէժիմի բոլոր զեղծումները. մանրամասն խօսել այդ մասին աւելորդ եմ համարում, որովհետեւ այդ ինձ է վերաբերում։

Երրորդ օրը բերին Հնչակեան կուսակցութեան ծրագիրը, ինձ մօտ գտնուած հաշուետետրը, ընկուզի փայտից չինուած մի սիգարատուփ, աւետարանի ձեւով, որ նուէր էի ստացել Տրապիզոնում մի հայ արհեստաւորից, գիտական մի քանի գրքեր, լուսանկարներ, որոնք իմ ազգականներինս էին, ծոցի ուշատետր, կոմիտէի կնիքը եւ ռուսական հիւպատոսին յանձնուած փոքրիկ ծրարը, որը արդէն բացել եւ հանել էին մահուան վճռագիրը, ուր նոյնպէս անուն չկար։

Հետեւեալ հարցաքննութեան սկսեցին հարցեր տալ իմ մօտ գտնուած իրերի մասին։

Դրամական հաշուեցուցակը գրած էր Վռամեանի ձեռքով եւ նեբրատուների անունների փոխարէն նշանակված էին կեղծ անուններ. օրինակ՝ Կայծակ, Երկաթ, Կացին, Մառ եւ այլն, այնպէս որ հաշուեցուցակի պատճառով ոչ մի հայ վտանգի չենթարկվեց. եւ ինչպէս կարող էր ենթարկվել, քանի որ այնտեղ ոչ անուն կար եւ ոչ մականուն, այլ պայմանական անուններ։ Եւ երբ ինձ հարցրին թէ ովքե՞ր են այդ դրամ աւողները, ես պատասխանեցի.

—Զը գիտեմ, ոչ ժողովողն եմ ես, եւ ոչ էլ հաշիւը գրողը։

Իսկ այն հարցին թէ գրողը ո՞վ է, պատասխանեցի թէ՝ մեր ընկերներից մէկը որի իսկական անունը չը գիտեմ։

Վերջը բաց արին իմ փոքրիկ ձեռատետրս, որի մէջ նշանակված էր. «Արեւելք՝ 25 ոսկի ստացված». եւ Մուրատ, Աստուածատուր եւ Կարապետ անունները որոնց ես դրամ էի տուել։

Այդտեղ ես սառուցեալ բարկացայ ինձ վրա. սակայն իսկոյն ուշքի եկայ, պաղարիւնութիւնս գտայ եւ շարունակեցի պատասխանել նրանց տւած հարցերին. մանաւանդ որ Մուրատն ու Վռամեանը արդէն ինձնից առաջ փախել էին եւ նրանց տուները խուզարկվել. յետոյ Կարապետ Քիւրքճեանն էլ ժամանված էր ձերբակալված տէրօրիստների կողմից եւ վաղուց փախել էր Տաճատի տէրօրիստի հետ. այնպէս որ իմ յուշատետրիս մէջ կառավարութեան նախօրօք ոչ յայտնի, մի մարդ կար. միայն Աստուածատուր, որը նոյնպէս մի քանի շաբաթ առաջ հեռացել էր Պոլսից։

Նորից ասում եմ որ իմ պատճառով ոչ մի մարդ չէր կարող ձերբակալվել, որովհետեւ բոլորն էլ կառավարութեան արդէն ծանօթ էին, ինձնից առաջ մատնված եւ միեւնոյն ժամանակ արդէն Պոլսից հեռացած. ես ուզեցի օգտվել այդ հանգամանքից եւ կառավարութեան արդէն յայտնի, խուզարկութիւններով ու իրանց փախուստով յանցաւոր լինելը հաստատված մարդկանցը կոմիտէի ընկերներ յայտարարեցի, միւսներին բոլորովին կասկածից ազատելու դիտումով։ Ուրիշ կերպ էլ անկարելի էր. դրանով ես փրկում էի Պոլսում մնացած բոլոր կարեւոր գործիչներին, եւ ինձ միացնում էի արդէն կառավարութիւնից հալածված եւ յայտնի մարդկանց, որոնք իրանք փախել եւ ազատ էին։ Այդ միացումով ես աւելի դժուարացնում էի իմ գործը եւ վիճակս. բայց ո՛չ կառավարութեան ձեռքից արդէն խուսափածների։

Հարցաքննիչը շատ հեռաքրքրվեց «Արեւելքով», նա կարծեց որ Արեւելքի խմբագրութիւնն էի նշանակել. սուրին նրա խմբագիրների անունները, աւելին եւ Արփիարի անունը։ Ես պատասխանեցի որ «Արեւելք» պայմանական անուն է. կեղծ՝ ոչ թէ Արեւելք լրագիրը եւ այդ լրագրի խմբագիրներին չեմ ճանաչում։ Արփիարին ճանաչում եմ իբր հրապարակախօսի եւ շատ վատ կարծիք ունեմ նրա մասին. նա երբեք չէ կարող յեղափոխական լինել, եւ չէ։ Ես նրա ընկերը չեմ եւ երբեք չեմ կարող լինել։ Նա երբեք յեղափոխական գործով ինձ հետ տեսակցութիւն չունեցել. եւ ոչ ես եմ այդ մասին նրա հետ խօսել։

(Շարունակելի)

մաղթութեան աղօթք կատարեց Հիւանդանոցի մատրան մէջ ։

—Եգիպտոսի առաջնորդական ընտրութեան տեղեկագիրը վերջապէս ներկայացեր է Խառն Ժողովին . ոմանք պնդեր են կառավարութեան տեղեկագրել, իսկ ուրիշներ առարկելով թէ անկարելի է վաւերացումը, պահանջեր են որ յետաձգուի ։ Վերջապէս Յարութիւն փաշա ելից հնար մը գտեր է, առաջարկելով կայսեր գթութեան դիմել իր գահակալութեան տարեդարձին առթիւ և Իզմիրլեանը Պոլիս բերել տալու շնորհը խնդրել ։ Դիմումը եղած է, բայց արդիւնք չկայ . հիմա ի՞նչ պիտի ընէ Խառն Ժողովը . պէտք կըլլա՞յ արդեօք գալ տարուան սպասել . աճապարելու ալ տեղի չկայ արդէն ։

—Բարիզի ուսանողներէն շատեր կը վկայեն այն մեծամեծ բարիքներուն համար, զորս յաճախ իրենց բրած է Նուպար փաշա։ Անցեալ շաբթուան մէկ «Բիւզանդիոն»ին մէջ նամակ մը կար Բարիզէ ղրկուած ուր կըսուէր թէ ուսանող մըն ալ դիմեր է վերջերս, բայց Նուպար փաշաի դաւակը 50 ֆր. տալով ճամբեր է ։ Այս տեղեկութիւնը առիթ բռնելով, «Բիւզանդիոն»ի խմբագրութիւնը այն կարգի խորհրդածութիւններ բրած է, որ ամէն կարգի ողջամիտ մարդու խորին ցաւ պատճառած է ։ Յիշեալ թերթը կըսէ թէ Նուպար փաշաի այլ և այլ կերպերով (.?) Եգիպտոսի մէջ դիզած 2 միլիոն ոսկիի հարստութիւնը ազգին ի նպաստ չէ գործածուած ։ Սակայն մենք մօտէն գիտնալով ամէն բան, կրնանք խղճի հանդարտութեամբ ըսել թէ Նուպար փաշա մեր է՛ն բարերգործ և էն առատագութ հայն է, Մեծ հայը անշուշտ չպիտի վըշտանայ այս կարգի հրատարակութիւններէ . ինք նմանօրինակ ապերախտութեանց հանդիպած էր վերջերս խել մը գաղթականներու կողմէ, որոնք գացած, դիմած և նպաստ ընդունած էին իրմէ և յետոյ հայհոյած էին իր դէմ ։ Կսպասենք որ Նուպար փաշաի մէկ կենսագրութիւնը երեւայ, այս կարգի անձանց ցոյց տրուելու համար թէ ո՞վ է այդ Իզմիրցի հայը, որ իր տաղանդին և ազգասիրութեան վրայ ամենուն հիացումը գրաւած է իրաւամբ ։ Պոլսի մէջ իր մասին պաշտպանողական բան չի կրնար գրուիլ, որովհետեւ հայ փաշան օսմ. տէրութենէն ատուած մէկն է, եգիպտական խնդրին և Հայաստանի բարենորոգման ծրագիր պատրաստելուն համար ։

* * *

——)·(——

## ԱԶԳԱՅՆՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ (3)

ՇՐՋԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

—Զուիցերիայի մէջ կայ չորս տարր՝ Ֆրանսացի, Գերմանացի, Իտալացի և Ռոմանշ, բայց այնուամենայնիւ այդ տարբերէն և ո՛չ մին նպատակ ունի, երբ և իցէ, ձուլուիլ, միանալ իրեն համարիւն ցեղակցի հետ, իւր հայրենակից օտարացեղի դէմ ։

Ձնայած իրենց ցեղային համանմանութեան, շատ հայեր այսօր միացած են զանազան օտար տարրերի հետ և նրանց հետ են մի ամբողջութիւն, մի ազգութիւն կազմում ։

Համացեղութիւնը ազգերի պատմութեան, նրանց կազմակերպութեան շրջափոխութեան մէջ իւր շրջանն ունեցել է, այդ անտարակոյս է, բայց այդ սկզբունքը, իւրերի բնական ընթացքով, այսօր բոլորովին կոճղացած է, ուստի առաջնորդ գաղափար հանդիսանալ այլեւս չէ կարող ։

Գ. —Լեզու. — Համախմբային, ընկերական կեանք վարելու համար, հարկաւոր է որ ընկերութեան անդամները իրարու հասկանան, և ահա այդ միջոցը ընձեռում է լեզուն ։ Ուրեմն լեզուն իւր էութեամբ ո՛չ միայն մի մեծ կապ է և միութեան ազդու պատճառ, այլ և զօրաւոր գործի իրեն տիրապետող անդամների մէջ մտքի ու կամքի համերաշխութիւն, փոխադարձ համակրութիւն յարուցանելու ։ Այս էլ բաւական չէ ։ Լեզուի պաշտօնը դըրանով չի վերջանում ։ Նա ոչ միայն կապում է մի ազգի ներկայ անդամները, այլ նա նրանց յաջորդաբար օղակում է և՛ անցեալի հետ, որով միշտ յառաջանում է մի ամբողջութիւն, մի միութիւն, որի հայրը ներկան է, հիմը՝ անցեալը, իսկ մեծութիւնը՝ ապագան ։ Ուրեմն ազգայնութեան յայտարար նշանը, նրա գոյութեան յենարանը մի՞թէ լեզուն չէ ։—Անշուշտ, պնդում է Գերմանական թէզը ։ Որովհետեւ ազգերին իրօք իրարմէ զատող, անջատ մարմին կազմողը լեզուն է, ուստի ազգային սկզբունքը իւր մէջ ամփոփում էլ նա է ։

—Արդարեւ, ազգերի կազմակերպման և զարգացման գործի մէջ՝ լեզուն զօրաւոր դեր է ունեցել, այդ անուրանալի է . բայց այն էլ ակներեւ է, որ այսօրուան քաղաքակրթութեան բարձր աստիճանի վրայ կանգնած ազգերի համար՝ լեզուն այլեւս կապող, միութիւն, ամբողջութիւն յառաջացնող ազդակ չէ ։ Լեզուն մեր օրերում ազգայնութեան համար բոլորովին անհրաժեշտ և բացարձակ պայման չէ, ինչպէս նախկին դարերում ։ Լեզուի նոյնութիւնը (գիտակցական կապեր), ընդհանուր միութիւն, գաղափարի և զգացմունքի նոյնութիւն յառաջացնելու ոյժը այլեւս չունի ։

Եւ արդարեւ, Միացեալ Նահանգների մէջ խօսում են անգլիերէն . բայց Ամերիկացիները անգլիացիներ չեն ։ Կեդրոնական և հարաւային Ամերիկայի բնակիչների լեզուն է Սպաներէնը և պորտուգալերէնը, բայց նրանք ուրոյն ազգութիւններ են կազմում ։ Զուիցերիայի մէջ խօսում են ֆրանսերէն, գերմաներէն, իտալերէն, ռոմաներէն . բայց այդ հանգամանքը չի արգելում որ այդ այլալեզու տարրերը մի ձոյլ մի ազգութիւն կազմեն ։ Հարաւային բելգիացու լեզուն ֆրանսերէն է, բայց բելգիացին ֆրանսիացի չէ ։

Մաքուր հայերէն խօսողը լաւագոյն հայը չէ և ո՛չ էլ հայութեան գիտակցական անդամը ։ Միւս կողմից՝ եթէ լեզուի տեսութիւնը ընդունուի իբրեւ վերջնական պայման ազգայնութեան սկզբունքի, այն ժամանակ ո՞ր միութեան մէջ պիտի դնել այն հայերին, որոնք թէեւ խօսում են վրացերէն, թաճկերէն, արաբերէն, բայց նրանք այդ ազգայնութիւններից խորշելով խորշում են և գիտակցաբար մի մարմին մի ամբողջութիւն են կազմում հայ ազգի հետ, որի լեզուն թէեւ չգիտեն, բայց նրա հետ են կապուած իրենց զգացմունքներով ։

Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ

(Շարունակելի)

# ՔՐՈՆԻԿ

—)·(—

Իզմիրցի ծանօթ գիտնական Պ. Գալուստ Կոստանդեան, որ վերջերս վախճանած է, որո՞ւ կտակէ աղէկ իր՝ հազար ոսկիէ աւելի արժողութիւն ունեցող մատենադարանը ։ Տեղւոյս դպրոցի՞ն, ընթերցարանի՞ն, հիւանդանոցի՞ն, ատոնցմէ և ոչ մէկուն . այլ . . . Յոնաց դրադարանին ։

«Բիւզանդիոն», արդար իրաւամբ, «Իզմիրի մեծ ըէվզէկը» մակդիրը կը նուիրէ այդ օտարացած հայուն յիշատակին ։

—Թուրքերը, ոչ միայն կենդանի հայերը այլ և անոնց մեռելներն ալ հանգիստ չեն թողուր ։ Պոլսոյ գերեզմանատուններուն աչք տնկած են ։ Կարգը եկած է Օրթագեղի հին գերեզմանատունին որ, գումարի մը փոխարէն կառավարութեան պիտի թողուի ։ Կըսուի թէ ոսկորները գիւղին նոր գերեզմանատունը պիտի փոխադրուին ։

—Սուլթանը հրամայեր է որ Բաղեշի մէջ բանտարկուած հարիւրաւոր Ախլաթցի հայերը ազատ արձակուին ։

—Զմշկածագի Տեղապահը տեսակցեր է [illegible] Խարբերդի միսիոնարներուն հետ, որոնք նպատակ ունին Զմշկածագի և շրջակայ բոլոր գիւղերուն որբերը ժողվել Ամերիկեան Որբանոցը դնելու համար, շրջաբերական մը ղրկեր է իր հօտին, որ առանց կեդրոնի գիտութեան իրենց որբերը չյանձնեն . որովհետեւ ազգը պիտի կրնայ հոգածու կըրթութիւն մը տալ իր զաւակներուն, Ազգ. Որբանոցի մը մէջ, զոր բանալու վստահութիւնը ունի Տեղապահը ։

—Թիֆլիսէն կը գուժեն հայ տաղանդաւոր կատակերգակ Թրեանցի մահը ։ 58 տարեկան էր և 38 տարիներէ ի վեր հայ բեմին կը ծառայէր առանց տըրտունջի, շատ անգամ քաղցած և կարօտ ։

Թրեանցի մահով հայ թատրոնը իր լաւագոյն ոյժերէն մէկը կը կորսնցնէ ։

—Տեղւոյս Հոգաբարձութիւնը կը ծանուցանէ թէ ուսուցչական մարմինը ընտրուած է և թէ դասախօսութիւնները սկսած են երեկուընէ ի վեր . և կը հրաւիրէ ծնողները որ առ առաւելն մինչեւ ամսոյս 7 իրենց զաւակներուն անունը արձանագրել տան ։

—Սիլիստրէի լսարանին երկրորդ գումարումը տեղի ունեցաւ անցեալ կիրակի ։ Գլխաւոր ատենախօսն էր Տ. Շալճեան որ խօսեցաւ պուլկարահայոց կրթական գործին վրայ ։ Խօսք առին նաեւ Տ. Նահապետեան և Ոստանիկեան ։ Ունկնդիրները շատ գոհ մնացին ։

—Շուշիի Թուրքերը մեծ պատիւներ ըրեր են Կաթողիկոսին ։ Իրենց ամբողջ խանութները գոցելով և իրենց հոգեւորականութեան առաջնորդութեամբ ճամբուն վրայ շարուած՝ Հայրապետին անցած պահուն կը գոչէին «սա՛ղ օլ, Հայրիկ» ։

—Վերաշինութեան գումարէն աւելցած 2,500 ոսկւով պիտի կառուցուի Հիւանդանոցին այն թեւը որ պիտի պարունակէ հիւրանոց, դեղարան եւ տեսչարան . իսկ Մատրան շինութեան ծախքը պիտի հոգայ Տ. Միքայէլ Յակոբեան ։

—Անցեալ շաբթու Գում-Գաբուի ծովեզերքին մօտ հաւաքուած ահագին ամբոխ մը ծաղրանքի փրփիններով կը դիտէր քահանայական եւ վարդապետական բազմաթիւ փակեղներ, որոնք ալիքներուն վրայ կը պարէին ։ Պատրիարքարանի մըլտածները ծովը նետելէ տարբեր միջոց չէին գտած իրենց հին խալփախները անհետացնելու ։ Հայ նաւարար մը վերջ տուեր է տեսարանին թիի հարուածներով ընկղմեցնելով ալեծուփ փակեղները ։ Փակե՛ղ, ինչպէս կերեւայ . . . եկեղեցականներուն առջեւ ալ կորուսեր ես յարգդ ։

—Խարբերդի մէջ ահռելի ոճիր մը գործուեր է օգոստոս 3ին ։ Տեղւոյն վաճառականներէն Վահան Թիւֆէնկճեան իր 18 տարեկան գեղատի կինը—Արաբկիրցի որբուհի մը—խեղդամահ ըրեր է ահռելի կերպով զայն տանջելէ ետքը ։ Ոճրին շարժառիթը եղած է օժիտը ազատելու փափաքը այդ կնոջմէն որ սկսած էր իրեն անհաճոյ թուիլ ։ Ոճրին գործակցութեան աջակցած է նաեւ մարդասպանին մայրը, պառաւ հրէշուհի մը ։

——)·(——

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

## ՄԱՀ ԱՒՍՏՐԻՈՅ ԿԱՅՍՐՈՒՀԻՈՅՆ

Ժընէվէն ամսոյս 10 թուա՛նով կը հեռագրեն.

Աւստրիոյ Էլիզապէթ կայսրուհին Պօ-Ռիվաժ պանդոկէն շոգենաւերու նաւամատոյցը կերթար, երբ ճամբուն վրայ անծանօթ մը վրան յարձակեցաւ և դանակի սաստիկ հարուած մը տուաւ սրտին։ Կայսրուհին ինկաւ, յետոյ ելնելով, շոգենաւ գնաց ուր քիչ մը ետքը նուաղեցաւ։

Պօ-Ռիվաժ պանդոկը տարուելով քանի մը վայրկեանէն հոգին աւանդեց։ Մարդասպանը որ ձերբակալուած է, Լիւքէնի անուն անիշխանական մըն է որ Իտալացի կը կարծուի բայց Բարիզ ծնած է։ Յատկապէս Զուիցերիա անցած էր նշանաւոր անձ մը սպաննելու։ Միտք ունի եղեր նախ Օռլիանի դուքսը դաշունել բայց ետքը հէգ Էլիզապէթ կայսրուհւոյն կեանքը խլել որոշեր է։ Լիւքէնի պիտի դատուի Զուիցերիական օրէնքին համեմատ որ մահուան պատիժը չընդունիր։ Աւելորդ է ըսել թէ այս եղերական մահը ինչ յուզում առաջ բերած է ամբողջ աշխարհի մէջ։ Վիէննայի մէջ առաջ եկած իրարանցումը, զայրոյթը և վշտի արտայայտութիւնները աննկարագրելի են։ Ամէն կողմերէ ցաւակցական ցոյցեր կըլլան ծերունի կայսեր, որուն քով փութացած են երթալ Կոլուխովսկի և Թուն նախարարները։

## ԿՐԷՏԷԻ ՆՈՐ ԱՐԻՒՆՑԵՂՈՒԹԻՒՆԸ

Նոր մանրամասնութիւններ հասած են Քանտիայի վերջին արիւնայեղութեանց մասին։ Գրած էինք արդէն թէ Թուրք ամբոխը տասանորդի տուրքի գանձման նոր դրութենէն դժգոհ՝ յարձակում գործած էր նոյն պաշտօնատան առջեւ սպասող պահակներուն վրայ։

Սոյն զինուորներէն մէկը յանկարծ, Թուրքէ մը դաշոյնի հարուած մը ընդունելով՝ կիյնայ. իր հրացանը ինքնաբերաբար պարպուելով Թուրք մը կը սպաննէ, և այս կըլլայ ընդհանուր խառնակութեան սկզբնաւորութիւնը։

Պահ մը ետքը հրայանաձգութիւնը կը սկսէր քաղաքին մէջ, և «Հազաւ» թնդանօթակրին 20 զինուորները, որոնք կը դրոնուէին քարափին վրայ, ամբողջովին ջարդուին առանց իրենց նաւը ապաստանելու ժամանակ գտնելու։ Քառասուն անգլիական զինուորներ որոնք հեռագրական կայարանին մօտերը զետեղուած էին, վռնտուեցան, հալածուեցան և վիրաւորուեցան։ Մեռածներուն և վիրաւորներուն թիւը հարիւրի կը մօտենայ։ Այս միջոցին Թուրք խուժանը մոլեգին կատաղութեամբ տուները և մթերանոցները հրդեհելու զբաղած էր. իսկ զրահաւորները քաղաքը կը ռըմբակոծէին անխնայ, ամէն բան ջարդ ու փշուր ընելով իրենց մահացու ռումբերով։

Գալով անգլիական հիւպատոսին, ո՛չ թէ վողոյին մէջ սպանուած է հրացանի հարուածով, այլ իր տանը մէջ ողջ ողջ այրած է իր սպասաւորներէն մէկուն հետ մէկտեղ։ Նմանապէս գերմանական հիւպատոսարանն ալ մոխիրի վերածուած է։

Այս պահուս Կրէտէի անգլիական հիւպատոսը, Քմբրիթաուն զրահաւորը հեծած՝ Քանտիա գացած է քննութիւն կատարելու։ Յամաք ելնելէ առաջ, անգլիական զօրաբաժին մը ղրկեց, քաղաքին գլխաւոր կէտերը գրաւելու, որպէս զի արգիլէ միւսլիւմանական ոևէ նոր յարձակում։ Եւրոպական բոլոր մեծ թերթերը և գլխաւորաբար անգլիական և իտալականները միահամուռ են պահանջելու որ Կրէտէի խնդիրը նորէն՝ այսինքն աւելի հաստատուն հիմերու վրայ կարգադրուի։

«Թան», այս առթիւ աղդու խմբագրական մը հրատարակած է որ կծու ակնարկութիւններ կը պարունակէ այն թոյլ, անզօր և կիսատ միջոցներուն մասին, որոնցմով տէրութիւնները կը փորձեն հաշտութիւն գոյացնել աշխարհի մէջ։

## ՕՄՏՈՒՐՄԱՆԻ ՑԱՂԹԱՆԱԿԸ

Անցեալ թիւով յայտնած էինք թէ անգլօ-եգիպտական բանակին և Տէրվիշներու միջեւ մեծ և վճռական ճակատամարտի մը լուրը անհիանալի կը սպասուի։

Արդարեւ այդ ահեղ պատերազմը տեղի ունեցած է նախորդ կիրակի օր, փայլուն յաղթանակ մը թողլով անգլօ-եգիպտական բանակին և անոր քաջարի զօրավարին-Քիչնէրի։ Օմտուրմանը, ժանտատեսիլ քաղաք մը հողէ տուներով, և բոյն մահտիական կրօնքին և զօրութեան, անգլիացւոց ձեռքը ինկած է, որոնք ետքէն Քարդումի ալ տիրած և աւերակի վերածած են։

Երկու կողմերէն ալ, պատերազմի պահուն հերոսական անթիւ գործեր կատարուած են։ Անմոռանալի է Քիչնէրի ասպետական ընթացքը, որ Մարգարէին սեւ դրօշը ձեռքը՝ իր զօրագնդին գլուխը անցած՝ մտած է Օմտուրման սուրբ քաղաքը։ Տէրվիշներն ալ այնքան քաջ՝ որքան վայրենի են. և եթէ վիրաւորուելով փոխադրուին քրիստոնեաներու ձեռքով, առիթը չեն փախցներ եաթաղանի վերջին հարուած մը իջեցնել զիրենք խնամող ձեռքերուն։ Պատերազմին մէջ 15,000 տէրվիշ և միայն 500 անգլիացիներ ինկած են։ Կռուի դաշտը դիակներով և սպիտակ պուրնուզներով ծածկուած՝ ձիւնապատ դաշտի մը կը նմանէր։

Այս [վճռական պատերազմը մեծ նշանակութիւն ունի Եգիպտոսի ապագային տեսակէտով, որովհետեւ միանգամ ընդ միշտ աղատած է զայն տէրվիշական ոևէ արշաւանքէ։ Լօնտոնի մէջ ուրախութիւնը մեծ է, ոչ միայն Կորտոն զօրավարին վրէժը լուծուած ըլլալուն՝ այլ նաև անոր համար որ այս յաղթանակը, ա՛լ աւելի կամրապնդէ իրենց տիրապետութիւնը Եգիպտոսի վրայ։

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Զարի առաջարկը նեղ դրութեան մէջ դրած է Բ. Դուռը, որ միշտ կը խորշի այն ամէն դեսպանաժողովներէն, որոնք աբեւելեան խնդիրը կրնան սեղանին վրայ բերել։

Ռուսի Թուրք կառավարութիւնը իր պատասխանը տալէ առաջ՝ միւս տէրութեանց որոշման պիտի սպասէ։

—Սպասելով դաշնագրին վերջնական ստորագրման, Սպանիոյ երեսփոխանները և կառավարութիւնը պարտութեան պատասխանատուութենէն ազատելու համար, նախատինք չմնար որ իրարու գլխու չթափեն։ Նիսաերը վոթորկալից են։ Նշակելի է Ամէնաս կոմսին բանախօսութիւնը որ ամբողջ պարտութիւնը զօրավարներու կը վերագրէ։ Ես, գոչեց կոմսը, ուղղեցի իմ ողջոյններս հայրենիքի մարտիրոսներուն, զինուորներուն, և ոչ թէ զօրավարներուն, որովհետեւ չգիտցան վարել զանոնք և ոչ ալ կըրցին ցոյց տալ անոնց պատերազմի դաշտին վրայ իյնալու արժանաւոր եղանակը։ Պէտք է խլել անոնց ուսնոցները, պատուանշանները. խլե՛լ զօրավարներու կուրծքին ժապաւէնը վիզերնուն փաթթելու համար։

—Կըսուի թէ հրամանատար Լաթէրհաղի իր հոմանուհիին հետ Բարիզէն փախեր է։

—Գերմանական թերթ մը չինացի ապստամբներու հետեւեալ շրջաբերականը կարտատպէ.

«Հայր երկինքը և մայր երկիրը երբեք իրաւունք չեն տըուած սակաւաթիւ հազարներու իրենց շռայլութեան համար միլիոններու սեփականութիւնը իրենց քէֆին համաձայն կարգադրելու։ Հարստութեան տիրապետութիւնը չի կրնար երբեք զօրաւորներու առանձին արտօնութիւնը ըլլալ։ Հարստութիւնը կը գոյանայ մեզ կենակից ճընշուածներու աշխատանքով և քրտինքով։ Արեւը իր ճաճանչեղ երեսով, աշխարհն իր վայելչութեամբ հասարակաց սեփականութիւն են, և հասարակաց սեփականութիւնը պէտք է խլուի փոքրաթիւ ճնշողներէն՝ հասարակաց բարօրութեան համար...»։

——).(——

## ԿԱՐԵՒՈՐ

Ձեր վաճառատան համար եթէ կը փափագիք լաւ պաշտօնեայ մը ունենալ, դիմեցէք խմբագրութեան որ պիտի յանձնարարէ ձեզ տոմարակալութեան և առևտրական գործառնութիւններու մէջ փորձառու երիտասարդ մը։ Դիւրամատչելի թոշակով կը բաւականանայ և կարող է իր բարոյականի մասին ընտիր երաշխաւորութիւններ հայթայթել։

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

Կուզէ՞ք վաճառատան լաւ պաշտօնեայ մը. դիմեցէք Շարժումի խմբագրութեան, որ ցոյց կուտայ հայ երիտասարդ մը որ ինը տարիէ իվեր կառավարական պաշտօն կը վարէ և տոմարակալութեան ճիւղին համար Վառնայի առեւտրական դրասենեկէն վկայուած է։

Երիտասարդ և քաջառոյզ Պոլսեցի հայ կին մը կը փափաքի տունները ծառայել իբր

ԿԱԹՆՏՈՒ

հասցէն Դ. թաղ թիւ 1154, Թոտոր Բանայօթօֆի տունը։


ՎԱՐԴՕ

ԵՐԿՈՒ ՍԷՐ
(ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ)
—).(—
)( Գին 1 Ֆրանգ )(

Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնայի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպէ՝ Տ. Անտոն Կոչի մօտ, Ռուսչուք՝ Հայկ Մալաքեանի սրճարանը, Սոֆիա՝ Տ. Մուշեղ Արծրունիի քով։

Մօտերս մամուլին կը յանձնուի նոյն հեղինակին «Բռնութեան զոհերը»։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ՍԱՊԱՇ-ԳԻՒԼԵԱՆ
—).(—
ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՂԱՓԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԻՑ ՑԵՏՈՅ
—).(—
ԳԻՆ 1 ՖՐԱՆՔ

Կը վաճառուի Շարժումի խմբագրատունը։


ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ „ՇԱՐԺՈՒՄ"Ի
—).(—

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցէտոմս, նամակագլուխ, հարսանեկան հրաւիրագիր, մահազդ, ինչպէս նաև պրոշիւռներ։

Գիներն յոյժ դիւրամատչելի։ Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին։


«ՇԱՐԺՈՒՄ»

Վառնայի մէջ կը վաճառուի Մուսալլա, Թահմիզ Կէօզիպէօյիւքեանի խանութը, եւ Ապտիւրրահման մզկիթին դէմը հայկական գրատունը, Ա. Զարպհանէլեանի քով։

Печатница „Взаимность" Варна.